ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Նինա Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ույծի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____5

ԳԼՈՒԽ 1. Կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը_____7

ԳԼՈՒԽ2. Մայրենիի դերը որպես արժեհամակարգի ձևավորման միջոց_____11

Եզրակացություն_____14

Գրականության ցանկ_____16

Հավելված 1_____17

Հավելված 2_____19

Հավելված 3_____21

Ներածություն

Հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից,ինչպես նաև անկախ մեր քաղաքական համոզմունքներից:

Գ.Նժդեհ

Երեխաների մեջ արժեքային համակարգի ձևավորման համար իր անգնահատելի և մեծ դերը պետք է ունենա դպրոցը, որտեղ երեխան անցկացնում է իր օրվա զգալի մեծ մասը: Այս ուղությամբ դպրոցը և ընտանիքը պետք է համատեղ ուժերով ձևավորեն երեխաների արժեհամակարգը՝ նպատակ ունենալով ստեղծել հասարակությանը պիտանի, բանիմաց, լիարժեք անհատ, ով կմերժի օտար արժեքները, վնասակար սովորույթներն ու բարքերը, միասին կնպաստեն անհատի ձևավորմանը:

Թեմայի արդիականությունը

Ըստ իս թեման բավական կարևոր է, քանի որ ճիշտ արժեհամակարգ ձևավորելը շատ կարևոր գործընթաց է: Դաստիարակենք արժանապատիվ, ազնիվ և հայրենասեր սերունդ կունենանք առողջ հասարակությունև պետականության ամուր հիմքեր, բաց թողնեն ճիշ արժեքների սերմանումը կունենանք վատ հասարակություն: Սա է պատճառը, որ արժեքային համակարգի դասավանդումը շատ կարևոր է:

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի,բնավորության, զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ,էքսկուրսիա,դասղեկական ժամ,արտադասարանական միջոցառում,հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Խնդիրը դիտարկվում է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեթոդների ընտրության,նպատակային և հետևողական կիրառման համատեքստում, քանի որ երեխայի բարոյական, հոգևոր,գեղագիտական, իմացական, մշակութային և ազգային արժեքների

ձևավորման համար մեծ նշանակություն ունի տարրական դպրոցը, մասնավորապես՝ հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների հիմքերն արմատավորող մայրենին:

Իմ կարծիքով անհերքելի է մայրենիի ուսումնասիրման գործընթացում գրական գեղարվեստական ստեղծագործությունների բանահյուսական պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Վերջիններս օժտված են կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով:

Ուսումնասիրելով այդ ստեղծագործությունները եկել եմ այն համոզման,որ մեր ժողովրդի հոգեկերտվածքը,աշխարհընկալումը,մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները արտացոլված են հենց այդ ստեղծագործություններում:Այս ամենն է,որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այսպես մենք պետք է աշակերտին հասցնենք այն գիտակցության,որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված համախմբվածությամբ, հանդուրժողականությամբ,մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ,այլև՝ պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեհամակարգի և վարվելակերպի ձևավորումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը

2.պարզել՝ ինչ ասել է « արժեքային համակարգ», դրա բովանդակությունը մայրենիի դասավանդման համատեքստում

3.բացահայտել արժեքային համակարգի և վարվելակերպի ձևավորման ուղիներն ու միջոցները:

Գրական ակնարկ

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տվել,որ յուրաքանչյուր հասարակություն,սոցիալական խումբ,հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ,որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները:Այդ հասարակությանը պատկանող մարդն ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ:

Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի առանցքային խնդիրներից մեկն է: Անձի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:

Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները, տարիքային զարգացման փուլերը, երեխայի ինտելեկտուալ զարգացումը, կրթությունը, տեղեկույթը,մակրո և միկրոմիջավայրի առանձնահատկությունները:Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ:Այդ գործոններն են ընտանիքը,հասարակությունը,դպրոցը,շրջապատի սոցիալական արժեքները և այլն:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից՝ մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեհամակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում՝ հասարակական-քաղաքական,բարոյական,գեղագիտական իդեալների(հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով,որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը:Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:

Անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապվում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մեջ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում: Աճող սերնդի արժեքային համակարգի ձևավորման մասին գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը,Անանիա Շիրակացին,իսկ Խաչատուր Աբովյանը ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց: Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը,բարոյական,գեղագիտական,աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը:

Միքայել Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է.

« Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,ձևավորի արժեքային համակարգ»:6

Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության առանցքային խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը,որի համար կարևոր էր համարում մտավոր,բարոյական,գեղագիտական,աշխատանքային դաստիարակությունը:

---

1 Ղ. Աղայան, Նվեր Մանուկներին, Երևան, 1941, էջ 7,

6 Մ. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954, էջ 45,

ԳԼՈՒԽ 1. Կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա:Դրա համար,անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր,որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը:Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել,մղել որոշակի գործողությունների,ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:
Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է

մայրենի լեզվի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները,որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում

- Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, նշանակողական, ազգային-մշակութային ավանդույթների պահպանմանման, փոխանցման, մտքերի ձևավորման ու արտահայտման, հուզական և այլն:Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում:Տարրականուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մերկողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքներիդիտարկում,որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում: Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, սոցիումում դրսևորվելու,մարդկանց հետ շփվելու պահանջմունքը:Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը,լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: Շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են արժեքները վերաբերում են արժեքների սոցիալական խմբին: Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ,բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձեվավորելու ձգտումը:Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում:Քաղաքավարությունն ու բարեկիրթ վերաբերմունքը դրսևորվում են խոսքային հաղորդակցման մշակույթի, հարգալից դիմելաձևերի, արտահայտչամիջոցների, բառապաշարի գործածման միջոցով: Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում

կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց: Այդ գործառույթը մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները: Գիտելիքը հասարակական փորձով ստուգված՝ իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը: Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրա- կանացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: Իմ դիտարկմամբ <<Ազգ>> և <<ժողովուրդ>> հասկացությունները դիտարկվում են որպես միասնական,ամբողջական, պատմականորեն ձևավորված էթնիկ հանրություն:Ազգային արժեքներին հաղորդակցվելը նախնիների ավանդույթները պահպանելու,շարունակելու, դրանց հավատարիմ մնալու համոզմունք է, ինչպես նաև սեր հայրենիքնօրրանի հանդեպ:Անձի համակողմանի ու ներդաշնակ ձևավորումն սկսվում է այն ըմբռնումից, որ ազգային մշակույթը ժողովրդի պատմական հիշողության մեջ հազարամյակների ընթացքում խտացած արժեքների շտեմարան է: Ազգային մշակույթն արտացոլում է լեզվի հարստությունը,պատկերավորությունը, արտահայտչականությունը և գեղեցկությունը: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ, լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ: Շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում' հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական հանուր մարդկության արժեքները, իմացական գիտելիքը որպես համամարդկային մշակույթի արտահայտություն, գեղագիտական գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը՝ որպես արժեք: Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ: Հուզական ներգործության առավելագույն հնարավորություններով են օժտված գեղարվեստական կերպարները:Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Այն նպատակաուղղված է բարոյական' հուզական արձագանքը' որպես արժեք, և գեղագիտական գեղեցիկի

զգացումը որպես արժեք, արժեքներին հաղորդակցմանը: Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի, այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են: Ապրումակցումը ենթադրում է անձի հուզական այնպիսի վիճակներ ու ապրումներ,որոնք նա տածում է դիմացինի նկատմամբ՝ նրա հուզական հոգեվիճակի նույնականացման հիման վրա: Գթասրտությունն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով: Կարեկցանքը անձի, այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է: Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում:Այսինքն՝ այն արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է, որ սոցիալական միջավայրը ընկալվում է որպես արժեք:

ԳԼՈՒԽ 2. Մայրենիի դերը որպես արժեհամակարգի ձևավորման միջոց

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հայերենի ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն:

Մայրենիի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Նկարում՝ ՀՀ Սյունիքի մարզ,Ույծի միջնակարդ դպրոցի 4-րդ դասարանցիներն են: Դասվար՝Նինա Սարգսյան

Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Նկարում՝ ՀՀ Սյունիքի մարզ,Ույծի միջնակարդ դպրոցի 4-րդ դասարանցիներն են:Դասվար՝Նինա Սարգսյան

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Եզրակացություն

Այսպիսով՝ արժեքների հանդեպ ճիշտ վերաբերմքունքը ու դրա կարևորության գիտակցումը արմատավորվում են տարրական դպրոցում, ուստի հարկավոր է մայրենիի դասաժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել նաև տարրական դասարաններում՝ դրանք նպատակաուղղելով ինչպես երեխաների գիտելիքների, կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:

Ըստ իս տարրական դասարաններում մայրենիի դասաժամերի հիմնական խնդիրները պետք է բխեն զարգացնող և ձևավորող ուսուցում ապահովելու հայեցակետից: Այսինքն՝ այդ գործընթացը պետք է ուղղվի սովորողների անհատական ու ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև երեխայի ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և անհատականությունը ձևավորելուն:

Իմ համոզմամբ առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմքում ժամանակակից մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում սովորողներին ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել ուսումնասիրվող նյութը և, դրա հիման վրա, ինքնուրույն որոշում կայացնել, աշխատել խմբերով, տեսնել սեփական աշխատանքի արդյունքն ու գնահատել այն, կատարել համատեղ խմբային ու համագործակցային աշխատանք, լինել պատասխանատու և հետևողական այդ աշխատանքի համար, գնահատել ինչպես իրենց, այնպես էլ մյուսների կատարած աշխատանքի արդյունքները, առավել ակտիվորեն ներգրավվել դասապրոցեսում: Վերջիններս էլ նպաստում են ինչպես դասանյութի հեշտ յուրացմանը, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը, այնպես էլ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:

Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում մայրենիի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը: Ուստի՝ արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից՝ որպես նպատակ

առանձնացնում ենք ուսուցման մեթոդները, իսկ որպես արդյունք՝ սովորողների ակտիվության բարձրացումը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորումը, ակտիվ և հետաքրքիր ուսուցման գործընթացի ապահովումը, հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ինքնուրույն գործունեության զարգացումը, ուսումնասիրվող նյութի շրջանակներում բարոյահոգեբանական, ազգային ու համամարդկային արժեքների մասին սովորողների պատկերացումների և գիտելիքների ընդլայնումը, սեփական կենսափորձում դրանք արժևորելու և գործածելու կարողության և հմտության ձևավորումը:

Գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Նվեր մանուկներին, Երևան, 1941

2. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Երևան,2017

3. ՀՊՉ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195

4. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը,

5. «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,

6. Մ. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան 1954, էջ 45

7. Նալչաջյան Ա. Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997

8. Օժեգով Սերգեյ Իվանովիչ - <<Մարդ և բառարան>> 1964

9. www.armedu.am

հավելված 1

Օրվա դասի պլան 1

1.Դասարան -4-րդ
2.Առարկա-Մայրենի
3.Դասի թեման-Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ
4.Դասի տիպը-Նոր նյութի հաղորդման դաս

5.Դասի նպատակը

- զարգացնել վարժ ,սահուն, արտահայտիչ ընթերցանությունը
- զարգացնել երեխաների համագործակցային կարողությունները
- բանավոր խոսքի զարգացում
- սերմանել հայրենասիրություն ՝ որպես սրբազան զգացում
- կատարելագործել բնագրի շուրջ աշխատելու կարողությունները
- ինքնավստահության սերմանում
-

Վերջնարդյունքը

- կարողանա նկարի շուրջ պատմություն հորինել
- տիրապետել սահուն և արտահայտիչ ընթերցանությանը
- աշխատել բնագրի շուրջ ,վեր հանել առաջարկվող հարցերի պատասխանները
- անցկացնել քննարկում թեմայի և ստեղծված պատմության շուրջ

6.Ռեսուրսներ՝ համակարգիչ, պրոյեկտոր,նկարներ

7.Միջառարկայական կապեր՝ Երաժշտություն,կերպարվեստ,տեխնոլոգիա

8.Խաչվող հասկացություններ՝ Պատճառ և հետևանք,անհատ և հարաբերություն,անհատական և մշակութային արժեհամակարգ

9.Դասի ընթացքը

Մուտք Մոտիվացնել երեխաների ուշադրությունը թեմայի շուրջ յուրաքանչյուր աշակերտին ներկայացվաց հարցադրմամբ 1-2ռոպե

Խթանման փուլ

Աշակերտները ըստ թիմերի ներկայացնում են իրենց հանձնարարված թեմայի շուրջ պատրաստած հաղորդումները:
«Սասունցի Դավթի» մասին ,«Սասնա ծռեր» էպոսի մասին և« Սասունցի Դավթի արձանի» մասին:5-րոպե

Մտագրոհի մեթոդով նկարագրում են Դավթին: 1-2 րոպե

Իմաստի ընկալման փուլ

Ազատ շարադրանքի մեթոդով երեխաները դիտելով նկարը՝ հորինում են մի պատմություն նկարի շուրջ և ներկայացնում:
Խճանկար մեթոդով թիմերին տրվում է որոշակի ժամանակ և հանձնարարվում է կարդալ դասանյութից իրենց հանձնարարված հատվածը ,բացատրել նորածանոթ բառերը ,դուրս գրել ուղղագրական արժեք ունեցող բառերը: Բնագրից ընտրել բարբառային ձևերը և դարձնել գրական:
Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները և կատարվում է համեմատում բնագրի բովանդակության և նկարի շուրջ ստեղծված պատմությունների միջև:20-րոպե
Աշակերտները դիտում են հատված մուլտֆիլմից թեմայի բովանդակությանը համապատասխան:7-րոպե
Սասնա Ծռեր - Սասունցի Դավիթ (2010) Մուլտֆիլմ | HD - YouTube

Կշռադատման փուլ

Հարցադրումների մեթոդով կատարվում է անդրադարձ մտագրոհի գծապատկերին և լրացվում:
Երեք, երկու, մեկ մեթոդով աշակերտները ներկայացնում են իրենց մտքերը:
8- րոպե

Գնահատում

Գնահատումը կատարվում է թեմային վերաբերող սանդղաշարի միջոցով,որը կազմվել էր նախապես՝ երեխաների մասնակցությամբ

2-րոպե

հավելված 2

Օրվա դասի պլան 2

1.Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

2.Դասարան՝ 4-րդ

3.Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման

4.Դասի թեման՝ Ջուրը պետք է մաքուր լինի

5.Դասի նպատակը՝

- ձևավորել գիտելիքներ ջրի որակական սպառման, նրա անփոխարինելիության մասին :
- իմացական և հետաքրքրասիրական ունակությունների և ստեղծագործական մտածողության ձևավորում:
- ջուրը խնայողաբար օգտագործելու, հետագա աղտոտումներից պահպանելու ունակության սերմանում:

6.Խնդիրները՝

- կարողանալ ներկայացնել ջուրը որպես կյանքի աղբյուր
- հասկանալ որ ջուրը պետք է մաքուր պահել և խնայել

7.Ռեսուրսներ՝ ջրի շրջապտույտը ներկայացնող ցուցապաստառ, համակարգիչ , փոքրիկ տեսաֆիլմ ջրի շրջապտույտի և աղտոտման մասին:

https://www.youtube.com/watch?v=4hGJ3lDXLbc

8.Միջառարկայական կապեր՝ մայրենի,կերպարվեստ

9. Խաչվող հասկացություններ՝ օրինաչափություն,պատճառ և հետևանք,ժամանակ և տարածություն

Դասի ընթացքը՝

Խթանում՝ 10-րոպե

- Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդով աշակերտները տեղեկություններ հաղորդեն ջրի մասին:
- Սահմանեն գետ, աղբյուր, լիճ, ջրվեժ,օվկիանոս հասկացությունները:

Իմաստի ընկալում. 25 րոպե

Դասարանը բաժանել երեք խմբի՝ ըստ ջրի ագրեգատային վիճակների՝ նկար հարցերի միջոցով:
Շրջագայություն պատկերասրահում մեթոդով խմբերը ծանոթանում են նոր նյութին և ներկայացնում են ջուրը մաքուր պահելու իրենց կանոնները, պատասխանում են հարցերին ,ավարտելուց հետո ներկայացնում են աշխատանքը և համեմատում արդյունքները
Լրացնում են T- աձև աղյուսակը իրենց ծանոթ գետերի և լճերի անվանումներով:

Կազմակերպվում է քննարկում հետևյալ հարցերի շուրջ

Ջուրն ինչպե՞ս կարող է աղտոտվել:

Ի՞նչ տարբերակներ կառաջարկեք ջուրն աղտոտումից պաշտպանելու համար: Հնչեցրած կարծիքներից հետո դիտեն տեսանյութ համապատասխան հղումով՝ https://www.youtube.com/watch?v=4hGJ3lDXLbc (Ջրի աղտոտման պատճառները)

Կշռադատում.7- րոպե

Անդրադարձ կատարել դասանյութին, լրացնելով հետևյալ աղյուսակը՝

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ սովորեցի

Գնահատումը. 3 րոպե

Գնահատումը կատարվում է նախապես կազմված ռուբրիկներով ,որոնց ստեղծմանը մասնակցել են նաև երեխաները:

հավելված 3

Օրվա դասի պլան 3

1.Առարկա՝ Մայրենի

2.Դասարան՝ 4-րդ

3.Դասի թեման՝ Հովհաննես Թումանյանի արձանի մոտ

4.Դասի տիպը՝ Հաղորդման դաս

5.Կահավորումը՝ Հ. Թումանյանի մեծադիր նկարը, ստեղծագործությունների ժողովածուներից

6.Դասի նպատակները՝ • զարգացնել բնագիրը ընկալելու կարողությունը,

• ձևավորել բնագրի բովանդակության և դրան կից տրված նկարների միջև կապեր,

• զարգացնել տեքստի շուրջ աշխատելու կարողությունները,

• ծանոթացնել նորածանոթ բառերի, արտահայտությունների ուղղագրությանն և նշանակությանը

7.Վերջնարդյունքներ՝

- Կարողանա սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը:
- Սեփական բառերով վերարտադրել բնագիրը՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի վերաբերյալ:

8.Խաչվող հասկացություններ՝ Պատճառ և հետևանք,անհատ և հարաբերություն,անհատական և մշակութային արժեհամակարգ

Կիրառվող մեթոդներ՝ «կռահի՛ր ծածկագրված բառը»,«պոպկորն»,«փոխգործուն գրառումների համակարգ»

Դասի ընթացքը՝

Խթանման փուլում օգտագործվում է«կռահի՛ր ծածկագրված բառը» մեթոդը: Պաստառին կամ գրատախտակին նկարում է շրջանակ՝ ճառագայթներով: Շրջանակի մեջ կպչուն թղթով ծածկում է գաղտնագրված բառըէ անակնկալ, իսկ ճառագայթների վրա գրում է հինգ հուշող բառ՝ անսպասելի, հանկարծակի, հանկարծադեպ, չսպասված, անկանխատեսելի:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին գտնել ճառագայթների վրա գրված բառերին համապատասխան մեկ հոմանիշ բառ, որը ծածկագրված բառն է:

Աշակերտները հուշող բառերի և ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ գտնում են ծածկագրված բառը՝ անակնկալ:

Այնուհետև առաջարկում է լուռ ընթերցել «գրավիչ մուտքի դռնակը»,«Անակնկալի սպասումով» նյութը: Ընթերցումից հետո ուսուցիչը հարցեր է ուղղում աշակերտներին՝ պարզելու լուռ ընթերցած նյութի ընկալման աստիճանը: Ապա ուշադրությունը հրավիրում է գրատախտակին նախօրոք գրված դասանյութի վերնագրին՝«Հովհաննես Թումանյանի արձանի մոտ» և դասարանին հարց է ուղղում, թե Թումանյանի ո՞ր ստեղծագործություններն են նրանց ծանոթ: Ուսուցիչն այստեղ օգտագործում է «Պոպկորն» հնարը: Աշակերտներն արագ թվարկում են գրողի ստեղծագործությունները/հեքիաթ, բանաստեղծություն, բալլադ, լեգենդ, զրույց, պատմվածք, քառյակ/:

Play posit գործիքով դիտել տեսանյութը և պատասխանել հարցերին

https://app.playpos.it/player_v2?type=share&bulb_id=1159759&lms_launch=false

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչն առաջարկում է գրատախտակին գրված վերնագրի շուրջ կանխատեսումներ անել դասանյութի բովանդակության վերաբերյալ: 2-3 աշակերտների պատասխանից հետո դասանյութը լուռ ընթերցում են: Աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով օգտագործվում է «փոխգործուն գրառումների համակարգ»մեթոդը:

Իրականացվող քայլերն են.

Առաջին: Աշակերտներն ինքնուրույն, լուռ ընթերցում են նյութը և միաժամանակ լուսանցքում ՝ հատվածի առաջ, նշումներ կատարում՝ օգտագործելով հետևյալ 3 նշանները.

V- հաստատում է իր իմացածը/ գիտեմ/

+- նոր տեղեկություն է /չգիտեմ/

!-հետաքրքիր է /ուզում եմ ավելին իմանալ/

Նշումների համար կարելի է օգտագործել հետևյալ աղյուսակը.

V	+	!

Յուրաքանչյուր աշակերտ աղյուսակում նշումներ է կատարում:

Երկրորդ: Ընթանում է զույգերով աշխատանք: Օգտվելով իրենց նշումներից, ձեռքի տակ ունենալով աղյուսակը՝աշակերտը մտքեր է փոխանակում ընկերոջ հետ:

Երրորդ: Լսվում և քննարկվում են զույգերով աշխատանքի արդյունքները: Աշխատանքն ընթանում է ողջ դասարանով:

Աղյուսակի 3-րդ բաժինը կարելի է օգտագործել տնային հանձնարարության համար՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկություններ քաղելու և գիտելիքներըխորացնելու նպատակով:

Այս աշխատանքներից հետո, երբ աշակերտներն ինքնուրույնաբար ծանոթացել են դասանյութի բովանդակությանը, ուսուցիչն առաջարկում է դասն ընթերցել բարձրաձայն՝ կարդալու որակական հատկանիշներ զարգացնելու նպատակով: Բովանդակության համակողմանի ընկալման համարկազմակերպվում է բառային աշխատանք, որն արտահայտվում է յուրօրինակ, նախշուն, մրգահանդես, խաղիկ, նենգ, դավ, ճոն բառերի իմաստների և ուղղագրության բացատրությամբ, շունչ, տապ, շունչը պահել դարձվածների մեկնաբանությամբ, արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը, գործն ապրում է դարեդար փոխաբերական իմաստներով արտահայտությունների բացատրությամբ:

Դասանյութի բովանդակության ընկալման խորացմանը կնպաստի նաև նկարների շուրջ կազմակերպվող աշխատանքը: Ուսուցիչն առաջարկում է դիտել դասանյութին կից տրված նկարները, ընտրել բնագրին համապատասխան հատվածը, կարդալ բարձրաձայն, կապեր տեսնել բնագրի բովանդակության և նկարների միջև, նշել ընդհանրություններն ու տարբերությունները: Առաջադրվում է նաև նկարների բովանդակությունն արտահայտել պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններով:

Կշռադատման փուլ՝

Դասի բովանդակության իմաստավորումն ամրակայելու և կշռադատման անցնելու քայլը բովանդակության վերաբերյալ առաջադրված հետևյալ հարցերն են.

• Հեղինակի կյանքի ու գործունեության ի՞նչ փաստերի ու իրադարձությունների ծանոթացաք:

• Թումանյանի ո՞ր ստեղծագործությունները հիշատակվեցին դասում, նշե՛ք վերնագրերը և արտասանեք:

• Որո՞նք են այն փաստերը, որոնք հետաքրքրեցին ձեզ:

Կատարված աշխատանքի խորացմանը նպաստում է նաև դասանյութին կից տրված 2-րդ առաջադրանքի կատարումը: Եթե ճիշտ միացնես սյունակի և տողերի բառերը, ապա հատման կետերի տառերով կկարդաս քեզ համար սիրելի բանաստեղծի ազգանունը:

Նույն նպատակին կծառայի նաև «Ուզում ես ավելին իմանալ» նյութը:

Դասը կավարտվի տնային հանձնարարությամբ:

1. Սովորել սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը:
2. Վերարտադրել բնագրի բովանդակությունը համառոտ և ընդարձակ եղանակով:
3. Լրացնել աղյուսակի 3-րդ սյունակը: